

ՀՏԴ 82.09

Գրականագիտություն

Էդուարդ ՄԿՐՏՅԱՆ

Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համլսարան, ք. գ. դ., պրոֆեսոր, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զուխրա Երվանդյանի սույն մենագրությունը նոր խոսք է ժամանակակից հայ գրականագիտության ասպարեզում: Հեղինակը կարողացել է մեծավ հաջողությամբ լուծել իր առաջադիր խնդիրը՝ Վարդան Հակոբյանի բազմաժանր և բազմաթեմատիկ ստեղծագործություններից առանձնակի քննության նյութ դարձնելով ազգային ոգին առավել ցայտուն արտացոլող երկերը:

Բանալի բառեր՝ մարտնչող, բնաշխարհիկ, գոյամարտ, բարձրարժեք, խտամտքեր, ընդգրկուն, հմայք, փորձառու, նվիրական, գաղտնագիր:

Յ. Մկրտչյան

МОНОГРАФИЯ ЗУХРЫ ЕРВАНДЯН. «ОТБРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ДУХА В ПРОИЗВЕДЕНИЯХ ВАРДАНА АКОПЯНА»

Данная монография кандидата филологических наук, доцента Зухры Ервандян является новым словом в области современного армянского литературоведения. Автор с большим успехом смогла решить поставленную перед собой задачу, из многожанровых и многотомных произведений Вардана Акопяна сделать материалом отдельного исследования те произведения, которые наиболее выразительно отображают национальный дух.

Зухра Ервандян делает глубокие анализы зрелого и опытного литературоведа, профессионально обосновывая свое своеобразное слово о работах автора. Она исключительным образом (языковым ощущением) и деликатностью, проявлением серьезных знаний и осведомленности в области некоторых отраслей искусства, армянской и общей литературы освещает отдельные эстетические линии Акопяна, делает ценные языковые стилистические наблюдения, непрерывно представляя дух и

Ключевые слова: боевой, коренной житель, война, ценной,

охватывающий, привлекательность, опытный, заветный, тайнаписный, афоризмы.своеобразность его поэтического слова.

E. Mkrtchyan

**“DEPICTION OF NATIONAL SPIRIT IN THE WORKS OF
VARDAN HAKOBYAN” ZOUKHRA YERVANDYAN’S
MONOGRAPHY.**

This monograph of docent Dr. Zoukhra Yervandyan is a new word in modern Armenian literature study/philology. The author with a great success could achieve a goal put in front of her, from multigenre and multitopic works of Vardan Hakobyan distinctly researching those ones, which more vividly depict national spirit.

Zoukhra Yervandyan made deep analyses of mature and experienced philologist, professionally substantiating her peculiar word about the author’s works. With exceptional linguistic sense and delicacy, showing serious knowledge and awareness in some spheres of art, Armenian and general literature she is covering the certain aesthetic lines of Vardan Hakobyan, making valuable linguistic stylistic observations and continuously presenting spirit and peculiarity of his poetic word.

Key words ‘fighter, domestic/national, struggle for existence, valuable, deep thoughts, encompassing, charm, experienced, cherished, cryptography.

Զուխրա Երվանդյանը հասուն և փորձառու գրականագետի խորագնին վերլուծություններ է կատարում՝ մասնագիտորեն հիմնավորելով հեղինակի մնայուն գործերի մասին իր ինքնատիպ ասելիքը: Նա բացառիկ լեզվագագացողությամբ և նրբիմացությամբ, հայ և ընդհանուր գրականության, արվեստի որոշ ճյուղերի լրջագույն իմացության ու քաջատեղյակության դրսևորմամբ լուսաբանում է Հակոբյանի գեղագիտության առանձնագծերը, կատարում լեզվաոճական արժեքավոր դիտարկումներ՝ անխաթար ներկայացնելով նրա պոետական խոսքի ինքնակերպությունն ու ոգին:

Վարդան Հակոբյանի մասին խոսելը, ինչպես ասում են, որքան հեշտ, նույնքան էլ դժվար և պատասխանատու գործ է: Հեշտ է այն առումով, որ նրա ստեղծագործությունները քննել, բնութագրել, նշել և արժևորել են բազմաթիվ գրականագետներ և գրողներ, ուսուցիչներ, արվեստի մարդիկ, մանավանդ, որ նրա գրքերը լայն տարածում ունեն ամենուրեք և հետաքրքրություն են ներկայացնում ընթերցողների համար: Դժվարությունը նրա մեջ է, որ լրջագույն պատասխանատվություն պետք է դրսևորել գրողի ստեղծագործությունների հանդեպ և, խուսափելով կրկնաբանություններից՝ նորովի, պատշաճ վերլուծություններով անդրադառնալ հեղինակին տրված գնահատականներին ու մեկնաբանություններին:

Այս այս ոչ դյուրին աշխատանքը նվիրումով է ստանձնել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զուխրա Երվանդյանը, ով, ի դեպ, հինգ մենագրության, վեց գիտամեթոդական և ուսումնամեթոդական ձեռնարկների, շուրջ քառասուն գիտական հոդվածների հեղինակ է: Շեշտենք, որ նա կարողացել է մեծավ հաջողությամբ լուծել իր առաջադիր խնդիրը՝ Վարդան Հակոբյանի բազմաժանր և բազմաթեմատիկ ստեղծագործություններից առանձնակի քննության նյութ դարձնելով ազգային ոգին առավել ցայտուն արտացոլող երկերը,

իսկ դրանք բանաստեղծություններ են, պոեմներ՝ ժանրային այլևայլ տարբերակներով (քնարական, քնարակապիկական, ավանդապատում, պատմական և այլն, գործեր, որոնց կառույցները նմանը չունեն ոչ միայն հայոց, այլև համաշխարհային գրականության մեջ¹, ինչպես նաև՝ վիպասանություն:

Զուխրա Երվանդյանը հետազոտական աշխատանքի ընթացքում դիմել է աղբյուրագիտական բազմաթիվ նյութերի՝ ձեռքի տակ ունենալով Վարդան Հակոբյանի ստեղծագործությունների գրականագիտական ուսումնասիրությունների, ինչպես ասում են, հսկայական պաշար, հիշատակության արժանի են Սերգեյ Սարիսյանի «Բանաստեղծի հայտնությունը» (1998 թ.), «Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը» (2016 թ.), Սոկրատ Խանյանի «Ցավի և սիրո պոեզիան» (1991թ.), «Վարդան Հակոբյանի ստեղծագործությունը» (գրական դիմանկար), «Մարտնչող գրականություն» (2012), Տաթև Սողոմոնյանի «Տաճարի ճանապարհին կամ մենարանի ուխտավորը» (2007), «Վարդան Հակոբյանի գեղագիտական համակարգը» (2011) գրքերը² և այլ շատ գործեր, որոնք հեղինակի կողմից ուշադրության և գնահատության են արժանացել:

Վարդան Հակոբյան բանաստեղծին արմատապես ճանաչելու և նրա ստեղծագործությունները գիտական խորը վերլուծությունների ենթարկելու, դրանք գեղագիտորեն արժեւորելու գործում, պիտի ասել, քիչ դերակատարություն չեն ունեցել հատկապես ակադեմիկոս Սերգեյ Սարիսյանի կարծիքներն ու դիտարկումները, այս հանգամանքը ես առանձնացնում եմ, որովհետեւ հենց Սարիսյանն է, որ «ստեղծել է Վ. Հակոբյանի բանաստեղծության գիտությունը»: Որպես օրինակ՝ հիշենք մեծ գիտնականի գնահատումներից թերեւս մեկը. «Վարդան Հակոբյանի բանաստեղծությունում մշտապես խոսում է բանականության հանձարը... Եական է բնաշխարհիկ գենետիկան: Վարդան Հակոբյանի պոեզիան արցախյան ոգու տիեզերական արձագանքն է»³ (ընդգծ. Է. Մ.): Եվ ահա, արժանի հետևորդ Զ. Երվանդյանը Վ. Հակոբյանի գեղագիտական աշխարհն ամբողջացնող գաղափարական-բովանդակային գլխավոր հասկացություններն ընդգծում է այսպես՝ «Հայրենիք (հայրենի Արցախ, Հայաստան) – հայրենյաց ճակատագիր – գոյամարտ – բնաշխարհ – ես-ի որոնումների ու հաստատումների տարակերպ երկունքներ»⁴:

Ուշի-ուշով, մեր ստացած տպավորությամբ ու մեծ բավականությամբ, նկատում ենք, որ Զուխրա Երվանդյանը, Վարդան Հակոբյանի բազմախոհ ու խորքային ստեղծագործություններից մասնավորելով ազգային ոգով առավել շաղախվածները, հասուն գրականագիտական և գրաքննադատական տարերքով, վարքով ու բանիմացությամբ, գիտական անբասիր եռանդով կատարել է մեծ և արգասավոր հետազոտական աշխատանք ընթերցողին ներկայացնելով բարձրարժեք մենագրությունը՝ «Ազգային ոգու արտացոլումը Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում», որն իր կառույցով, նյութի ընդգրկումով ու բովանդակային իմաստով դոկտորական ատենախոսություն է հիշեցնում:

Գրքի ձեւավորումը ուշագրավ ու բովանդակային է:

- Աշխատությունը կուռ կառուցվածք ունի. նրա բաղադրամասերն են.
- Երկու խոսք իմբագրի կողմից, ապա՝ հեղինակային առաջաբան (5-10):
- Գիրքը բաղկացած է չորս գլուխներից (11-223), ըստ որում՝ երրորդ գլուխը, որ վերաբերում է Վարդան Հակոբյանի «Ձատիկը ջրավազանի հատակին» ծավալուն վեպի վերլուծությանը, ունի երկու բաժին (99-168):

- Ամփոփումը (224-234) «ներկայացված» է հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով:
- Խոսք ավարտից հետո (235-236) բաժինը, ըստ էության եզրակացությունն է:
- Շրջանակից դուրս: Խտամտքեր (237-246): Այս բաժնում գետեղված են Վարդան Հակոբյանի ստեղծագործություններից քաղված շուրջ 140 իմաստախոսություններ:
- Օգտագործված գրականություն (247-250):

Հեղինակի կողմից կատարված գեղագիտական ուսունասիրությունները, հետազոտական վիթխարի աշխատանքը, վերլուծություններն ու բնութագրությունները, հիմք են տալիս քննության առարկա գրքի մասին առավել ընդգրկուն խոսք ասելու, սակայն բավարարվենք մի քանի դիտարկումներով:

1. Զուխրա Երվանդյանը գրական-գեղարվեստական ստեղծագործություններ վերլուծելու յուրահատուկ եղանակ ունի: Նախ՝ նա դրսևորում է գրականագիտության, հայ և ընդհանուր գրականության, արվեստի որոշ ճյուղերի լրջագույն իմացություն, քաջատեղյակություն, ապա՝ երեւոյթները մեկնաբանելիս, նա դիմում է վերլուծական, համեմատական ու համադրական եւ այլ մեթոդների, կատարած հետետւթյունները հաստատում հայ և համաշխարհային իրականության մեջ ճանաչված հեղինակներից բերվող մեջբերումներով: Այլ կերպ ասած, իր անձից գատ, սա այլոց նկատմամբ կիրառվող «հարգանաց հավաստին» է: Օրինակ՝ գրողի «էության տարածքները» քննելիս Ջ. Երվանդյանը նշում է՝ ինչքան էլ որ ամեն տողի հետ, ամեն տողի մեջ ինքնաբացահայտման նորանոր խորքեր հայտնաբերվեն, մինևույն է, պոետի էության ընդգրկումի չափը անորոշելի ու անիմանալի կմնա. «Եվ հասնել չկա՝ // որքան էլ գնաս» («Վոտորակներ», «Ես արդեն հասել եմ մի տարածք, որն ինձանից դեռ շատ հեռու է» («Լուսնային իմ սայթը»): Եվ հեղինակն այս առիթով վկայաբերում է Վիլյամ Մարոյանի խոսքը՝ գրողի էությունն ավելի տարածք ունի, քան կյանքը (42):

Օգտվելով Վահրամ Փափագյանի հետևյալ խտամտքից՝ *Լեզուն մարդու իմացության անսահման երգեհոնն է իր բյուրապատում ստեղնաշարով*, հեղինակն ընդգծում է՝ *Վարդան Հակոբյանի իր ստեղծած գեղագիտական համակարգով հավաստում է, որ ինքը կարողանում է հմտորեն օգտվել մեր հոգևոր ժառանգությունից և լեզվի «բյուրապատում ստեղնաշարը» իրեն ենթարկել* (166-167): Ավելին: Հակոբյանի բանաստեղծություններից բառերի ու կապակցություններից ծաղկաքաղ անելով՝ հեղինակը համոզիչ ձևով ցույց է տալիս, որ դրանք ասելիքն ավելի ներագույն դարձնող ընտրյալ միավորներ են: Եվ, իրավ, բանաստեղծության լեզուն դառնում է Նիկողայոս Մառի այն ասույթի խորիմաստության հաստատումը, թե *հայերենը աղոթքի լեզու է, աստվածային ձոխ ու աննման լեզու* (183):

Եղեռնի ցավը *հայկական հասցե ու անուն ունի*, այն մեր մեջ *անվերջ աճում է ու երբեք անցյալ չի դառնում*. ըստ Հակոբյանի՝ *Ամեն ցավի ցավ մի ասեք, ամեն ցավ տիրոջ // անունով կոչեք...* («Խոտի քնքշանքը»): սա համահունչ է գերմանացի նշանավոր փիլիսոփա և գրող Գեորգ Քրիստոֆ Լիխտենբերգի մտքին. *Մահը մշտական մեծություն է, իսկ ցավը՝ փոփոխական, որ ընդունակ է անվերջ աճել* (138):

Այսպիսի գուգադրումները շատ ու շատ են՝ մի քանի տասնյակներով, դրանք կարելի է հաշվել տողատակերի կիրառություններով, որոնք եւ, բնականաբար, ենթադրում են անվանի մտածողների ու գեղագետների կողմից կատարված ամենատարբեր դիտարկումների առկայություն, կարծիքների համադրումներ,

վերլուծություններ ու մեկնաբանություններ: Հեղինակային հղումներում ընթերցողը հանդիպում է այնպիսի անունների, ինչպիսիք են՝ Էռնստ Կասսիրերը (13), Վ. Փափազյանը (14), Գր. Գուրգադյանը (24), Պոլ Վալերին (25), Զ. Ավետիսյանը (27), Հ. Սահյանը (30), Գ. Գ. Մարկես (33), Բրունո Շույց (36), Մարիո Վարզաս Լյոսա (44), Ռ. Զ. Քոլլինգվուդը (49), Գ. Վ. Լայբնիցը (49), Վ. Գ. Բելինսկին (54), Հր. Թամրազյանը (56) Լ. Մկրտչյանը (60), Ալֆոնս դը Լամարթինը (63), Հր. Մաթևոսյանը (68), Ս. Սարինյանը (73), Ա. Բակունցը (77), Ալ. Թոփչյանը (98), Վ. Սարոյանը (107), Շիլլերը (109), Բլեզ Պասկալը (114), Ալբեր Քամյուն (116) և այլք: Այս անդրադարձներն ընդգծում են երկու կարեւոր հանգամանք, նախ՝ գրքի հեղինակի քաջատեղյակության, որակն ու աստիճանը, ապա՝ Վ. Հակոբյանի ստեղծագործությունների հմայքը, խորությունն ու վեհությունը:

2. Զուխրա Երվանդյանը հասուն և փորձառու գրականագետի խորագին վերլուծություններ է կատարում՝ մասնագիտորեն հիմնավորելով հեղինակի մնայուն գործերի մասին իր ինքնատիպ ասելիքը: Նա բացառիկ լեզվագագացողությամբ և նրբիմացությամբ լուսաբանում, վերհանում և ներքին բավականությամբ ցուցադրում է բանաստեղծի և վիպասանի բազմաշերտ ապրումների, զգացողությունների և գաղափարների գեղարվեստական ուրույն փայլատակումները:

Վարդան Հակոբյանն իր մարդ-կառույցով՝ բնույթով և էությամբ, խտացված մտքերի և գաղափարների գաղտնագիր ամբողջություն է, ինչպես Սերգեյ Սարինյանն է նշել, «բարդ երեւույթ է», որը բացահայտելու համար մասնագիտական լուրջ պատրաստություն և նվիրական ջանքեր են պահանջվում: Համոզված ասենք, որ գրքի հեղինակն այդ ամենն ունի, որոնք հնարավորություն են ընձեռել նյութը համակողմանի եւ ընդգրկուն վերլուծություններով հրամցնելու ընթերցողին:

Զ. Երվանդյանին հաջողվել է թափանցել Վարդան Հակոբյան բանաստեղծի տառապանքով, տխրությամբ և ողբերգությամբ, խնդրությամբ և երջանկությամբ, ըմբոստությամբ և կայծակնարությամբ, կորուստներով ու կարոտով, հաղթանակով ու փառքով տոգորված աշխարհը, նրա պոետական կերպարի խորքերը եւ, հիմնավոր վերլուծություններ կատարելով, ընթերցողին անխաթար ներկայացնել պոետի խոսքն ու ոգին: Մեր մոտավոր հաշվումներով՝ գրքի առաջին ու երկրորդ գլուխներում միայն բանաստեղծությունների 100 և ավելի վերլուծություններ և անդրադարձումներ կան: Դրանք մանրամասն դիտարկումներ ու բնութագրումներ են: Օրինակ՝ էջ 15-ում շուրջ 10 դիտարկում կա՝ պոետական ինքնահայեցումներ, ինքնագնահատումներ, տրամադրության անկումներ, խռովքներ, դժգոհություններ ու ցասումներ, չստացվածի թախիժ, ներքին վեճ ու պայքար, հիասթափության պահեր, ինքնադատումներ՝ հիասթափության պահեր (...*Հիասթափության պահերս աճող սնկեր են*) կամ ներքին վեճ ու պայքար (...*Իմ բառը իմ կռվանյութից է*):

Իսկ չորրորդ գլուխը՝ երկու բաժիններով (69 էջ), ամբողջությամբ նվիրված է «Զատիկը ջրավազանի հատակին» վեպի քննությանը, որն իր բնույթով, բնականաբար, տարբերվում է բանաստեղծությունների քննում-վերլուծումներից: Զ. Երվանդյանն այնքան ծավալուն, խորն ու մանրակրկիտ դիտարկումներ է անում, որ ընթերցողը հստակորեն պատկերացնում-տեսնում է վիպական գործողությունների, եղելությունների և հերոսների ապրած պատմական ժամանակներն ու միջավայրը՝ տիպական հանգամանքները, վեպի սյուժեն:

Վեպի գաղափարական աստղծի հիմքում 20-րդ դարի առաջին և վերջին տասնամյակների հայակործան ու հայասպան իրադարձություններն են: Գլխավոր

հերոսը՝ բժիշկ Արտեմ Գասպարյանն է՝ Ուշխուդանց Արտեմը, 1915 թ. ծնունդ էր. նույն տարում թուրք ենիչերիները Հարարում 5, փախուստի ժամանակ, սպանել էին նրա մորը. «*Առավոտյան մի պառավ նրան գտնում է արյան մեջ կորած: Կրծքի կաթի հետ մոր արյունն էր խառնվել*», - գրում է վիպասանը (էջ 12):

Զուխրա Երվանդյանը կատարում է ճշմարիտ և հավաստի դիտարկումներ, որոնք խոսում են վեպի գեղագիտական ու գաղափարական առանձնահատկությունների մասին: Մեջբերենք հեղինակի դիտարկումներից մի քանիսը. *Գեղարվեստական անունադրության գյուտերից կարելի է համարել հայրենի եզերքի գլխավոր քաղաքի Տրակերտ անվանումը՝ Տիրոջ կերտած (131) [Ստեփանակերտն է], Վեպի առանձնահատկություններից մեկն էլ արծարծվող նյութի նյութականության և ոգեղենության սահմանի անգատելիությունն է (ն.տ.), Գրողի կերտած տիպականի և անհատականի փայլուն համադրություններ են (130), Հուզախառն վավեր փաստերով ներկայացված տարեգրություն հիշեցնող այս վեպը (132) (... գրված է արցախյան պատերազմի տաք հետքերով), Խորապես ազգային գաղափարական բովանդակություն ունեցող այս վեպում գլխավոր պատումային գիծը ձգվում է անցյալ դարասկզբի ցեղասպանությունից մինչև դարավերջի ոչ պակաս արյունալի իրադարձությունները (122):*

«Իմ խնդիրն այս վեպում, - գրել է Վարդան Հակոբյանը, - մի քիչ այլ է: Երկու միլիոնի մեջ մտնո՞ւմ են, արդյոք, այն բյուրավոր նահատակվածների անունները, որոնք յաթաղանվել են Հարարում, Շուշիում, Բագավանում (Բագու), Շամախիում, Շամխորում, Գանձայում... հայկական բոլոր այն շեն ու վարքար բնակավայրերում, որոնք սպանդից անմիջապես հետո բռնի կերպով խորթմայրության են տրվել ազերական խորհրդակայսրությանը» (120. մեջբերումը վեպի էջ 3-ից):

Սերգեյ Սարինյանը նկատում է, որ *Վարդան Հակոբյանը... սիրագործված իր վեպով հայտնաբերել է տաղանդավոր արձակագիր Վարդան Հակոբյանին, և հայտնաբերումն այդ ավետարար է (140):*

Հեղինակի՝ Վարդան Հակոբյանի «Զատիկը ջրավազանի հատակին» վեպին վերաբերող գիտական բացառիկ ուսումնասիրությունն ու արժևորումներն ընձեռնվող հնարավորության շրջանակում, ցավոք, ամբողջությամբ ներկայացնել չենք կարող: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում շեշտել, որ դրանք արված են գրականագիտական հարուստ լեզվով:

3. Արցախյան թեմաներով գրված գեղարվեստական երկերում Արցախի բարբառային ձևերի գործածությունը մեծ առավելություն է, քանի որ դրանով մի կողմից՝ հայրենի եզերքի բնաշխարհն է շնչավորվում, և բարբառախոս արցախցին անմիջապես պատկերանում է քո առջև, մյուս կողմից՝ գրական-գեղարվեստական երկերին առաջադրվող հատուկ խնդիր է լուծվում. տիպականացվում է գործող հերոսների լեզուն, և ամբողջանում է «տիպական կերպարը տիպական հանգամանքներում» կերտելու սկզբունքի իրագործումը:

Վարդան Հակոբյանը գերազանց է տիրապետում մայրենի բարբառին, նա իր խոսվածքներին ու ստեղծագործությունները մեծապես համեմում է դրանց յուրատիպ կիրառումներով: Իսկ Զուխրա Երվանդյանը, որ նույնպես քաջատեղյակ է Արցախի բարբառին, բավականության զգացումով և բծախնդիր ընտրությամբ քննության առարկա ստեղծագործություններից վկայաբերում է բառեր, արտահայտություններ, կառույցներ և կատարում լեզվաոճական արժեքավոր դիտարկումներ: Նա գրում է. *Վարդան Հակոբյանը, ում «մեջ խոսում է հայկական հավիտենական Արցախը» 6 չի կարողանում զսպել իր անսահման սերն ու հիացումը հայրենի եզերքի նկատմամբ. Սյդպիսի օդ աշխարհի ոչ մի անկյունում*

չկա, ապա մարդկանց Պարի լուս-ն ու Ռնց ես, ոնց չես-ները (162), Երևի լեռան թոռ կամ ծոռ եմ ես... // Քիրսը՝ իմ հասցեն, անունս ասես // Տանդրան զանգի կոճակ է վրան. // Երևի լեռան թոռ կամ ծոռ եմ ես, // իմ մեջ անմեռ է ոգին վեհության (97): «Որպես Արցախ աշխարհի զավակ-բանաստեղծ,- մեկնաբանում է հեղինակը,- Հակոբյանը նվիրյալի մեծ ակնածանքով, կասեի՝ մեծ հպարտությամբ է օգտվում նաև մայրենի բարբառի հարուստ բառազանձից» (193):

Բարբառային խոսքի գործածության մի քանի օրինակ նշենք:

Հարարցի Մարգարը խոսում է գրականախառը. *Մատաղ ինիմ ծեզ, էս արուն-կրակի մաշին էլ ինի, ծեզ հրրթնրնքավ ընք փրսրկլական...* [146]:

- Միմոն պապը՝ անխառն բարբառով. *Չէ՛, մեր Մարգարը ճոկ մարդ ա, ըսածան ընգնող չի, վեր ասալ ա, պիտի անե...* Արա՛ մին տուշ (ն. ա.):

Ուրիշ հերոսների խոսքերից՝ *Վերը ասիմ, վերը թողիմ* [130], *Կտրվին էն օրերը, էլ տի փիս օրեր չտեսնանք* [154], *Քեֆներդ ա լլավ, թե հալներդ* [182], *Հը, քե մատաղ, Ղարաբաղում հինչ կա-հինչ չկա...* *Լոխ լլավա* [266]:

Բացի բարբառով կազմված ամբողջական խոսքերից, վեպում գործածվում են նաև բառեր, բառաձևեր և բառակապակցություններ, որոնք գեղարվեստական պատկերներում եզերքային բնավորության տիպիկ գուներանգներ են ստեղծում: Դրանցից են՝ *պինջիրփսոկ, ժենգյալ, մըխաշար, ծհան, պողեր, խլեղ, հարահաս, խոխեք, մաշված-չոփ դարձած այաներ, քեթկալներ, շինացեք, ճղպորե, ճնգճնգացնել, օխնը, օխնահաց, աշկար, քաշի սաղունձ, փրթոշ, «փափախ» անուն, փոտ անուն, քոլ, սատոր, շըղըթաթախ, հավայի-հավայի խոսել, ճապկե, ծկլթալ* և այլն:

Ի դեպ, բարբառային ձևերի գործածության առումով նշենք, որ ճիշտ կլիներ՝ պահպանվեին ձայնավորների և բաղաձայնների քմայնացման բարբառագրային տարբերակները:

4. Ամբողջական խորաշերտերով ներկայացնելով հակոբյանական գեղագիտության գլխավոր առանձնահատկությունները՝ Զուխրա Երվանդյանը «Զատիկը ջրավազանի հատակին» վեպի լեզվաոճական առանձնահատկությունները» և «Վարդան Հակոբյանի պոետիկան» բաժիններում լեզվական ու գրականագիտական վերլուծություններ է կատարում: Նա ընդգծում է, որ գեղարվեստական արտահայտամիջոցները «այնքան յուրօրինակ են ու պատկերաստեղծ, այնքան տեղին ու խոսքին ներծույլ, որ հերիքում են վեպն իր ամբողջության մեջ գեղարվեստական կատարելության հասցնելուն» (155): Նրա աչքից չեն վրիպում մակդիրները, անձնավորումը, փոխաբերությունը, չափազանցությունը, ճարտասանական հարցը, բառախաղը, աստիճանավորումը («Որքան հնարավոր է՝ շատ վերցնել կյանքից, հափռել, թալանել...»), պարադոքսը, կրկնությունը, նմանաձայնական բառերը, իմաստախոսությունն ու խտամիտքը, ասացվածքը (156-168):

«Վարդան Հակոբյանի պոետիկան» բաժինը հետևյալ խոսքերով է սկսվում. «Ռճական և ձևաբանական բազմաբնույթ անդրադարձումների ենք հանդիպում Վարդան Հակոբյանի բանաստեղծական ժողովածուներում» (169), և տողատակում նշվում են հինգ ժողովածուներ: Այստեղ 50-ից ավելի բանաստեղծությունների և խոսքերի անդրադարձներ են կատարվում՝ մտքերի խտացումներով և գրականագիտական արժեքավոր բնութագրումներով: Վերևում նշվածներից բացի, այստեղ շոյլ անդրադարձումներ կան նաև այլ արտահայտչամիջոցների. *ինչպես՝ հակադրություն, համեմատություն, կցուրդ (Շետո եկել է Առանը հեռվից, // Առանը հեռվից եկել, կանչել է...), խաչաձևում, հանգույց, նույնասկիզբ, նույնավերջ, գուզադրություն, նվագաբերում, բառախաղ, հարանունություն, դարձվածք,*

ճարտասանական բացականչություն, զեղչում, փոխանունություն, հումոր, առձայնություն, բաղաձայնություն (201-223): Հետաքրքրական մեկնաբանություններ են արվում բառագործածությունների, կրկնությունների, վերնագրերի վերաբերյալ:

Ամփոփում-ը հակիրճ է և իմաստալից:

5. Գիրքն ունի նաև «Շրջանակից դուրս» բաժին, որտեղ ներկայացված են շուրջ 140 խոսամտքեր՝ իմաստախոսություններ՝ բանաստեղծի պատկերավոր և բանաձևաբնույթ մտածողության յուրահատուկ կողմերն ու փիլիսոփայությունը հաստատող:

Ամփոփելով մեր խոսքը, ասենք՝ Զուլիբա Երվանդյանի «Ազգային ոգու արտացոլումը Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում» մենագրությունը, հիրավի, նոր խոսք է ժամանակակից հայ գրականագիտության ասպարեզում:

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ա.Նսանյանը: